ՀԿԴ/0063/02/22
ՎԴ/7252/05/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 դեկտեմբերի 2022 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ ՀՀ գլխավոր դատախազության ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության և Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերության միջև անշարժ գույքի օտարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և որպես հետևանք՝ ՀՀ կադաստրի կոմիտեում կատարված իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, թիվ ՀԿԴ/0063/02/22 (ՎԴ/7252/05/22) գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 7-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. ՀՀ գլխավոր դատախազությունը 2022 թվականի նոյեմբերի 21-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության և Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերության միջև անշարժ գույքի օտարման

իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և որպես հետևանք՝ ՀՀ կադաստրի կոմիտեում կատարված իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

2. 2022 թվականի դեկտեմբերի 5-ին թիվ ՎԴ/7252/05/22 գործը ստացվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանում, որին շնորհվել է ՀԿԴ/0063/02/22 համարը:

ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

3. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի դեկտեմբերի 8-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, 69-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 25-րդ հոդվածի 3.1-ին մասին, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-335-Ն ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին, ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ, 22-րդ մասերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԱՔԴ/1369/02/09 գործով 2010 թվականի դեկտեմբերի 3-ին և թիվ ՎԴ/12145/05/13 գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ին արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2022 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է հակակոռուպցիոն դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ սեփականության, գույքի օտարման շուրջ ստեղծված հարաբերությունները մասնավոր հարաբերություններ են, դրանցում Հայաստանի Հանրապետությունը (պետությունը)

հանդես է գալիս որպես մասնավոր իրավունքի սուբյեկտ, և նշված հարաբերություններում առկա չէ հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացում, ուստի դատախազության պահանջը չի բխում հանրային իրավահարաբերություններից, այն պետության գույքային շահերի պաշտպանության հայց է և ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով[1]:

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ 2-2040 գործով 2022 թվականի ապրիլի 13-ին, թիվ ՎԴ/7612/05/11 գործով 2022 թվականի մայիսի 19-ին, թիվ ՎԴ/0823/05/14, թիվ ՎԴ/0830/05/14 և թիվ ՎԴ/1621/05/14 գործերով 2016 թվականի ապրիլի 22-ին արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Հակակոռուպցիոն դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 07-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) ՀՀ գլխավոր դատախազությունը ոչ թե գույքի օտարման գործարքի շուրջ ստեղծված մասնավոր հարաբերությունների բացակայությունը ճանաչելու պահանջով է հանդես եկել, այլ՝ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի մինիստրների սովետի 24/11/1955 թվականի թիվ 699 կարգադրության հիմքով ծագած իրավահարաբերությունների, իսկ կարգադրությունը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ մինիստրների սովետի հանրային իշխանական լիազորությունների իրականացումն է, որը դրսևորվել է պետական սեփականություն հանդիսացող որոշ անշարժ ու շարժական գույքերի մեկ պետական գերատեսչության հաշվեկշռից մյուսին փոխանցելու միջոցով:*

Ամփոփելով վերոգրյալը՝ դատարանն արձանագրում է՝ Վճռաբեկ դատարանի կողմից հանրային իրավահարաբերության գնահատման համար անհրաժեշտ երեք պայմանների միաժամանակյա առկայությունը սույն գործով ապահովված է ինչպես հիմնական, այնպես էլ՝ ածանցյալ պահանջներով, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով սույն գործով հայցադիմումն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին»[2]:

---

[1] Տե՛ս գործը, հատոր 1, թերթեր 54-60:
[2] Տե՛ս գործը, հատոր 2, թերթեր 4-9:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

6. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0063/02/22 (ՎԴ/7252/05/22) գործը՝ ըստ հայցի՝ ՀՀ գլխավոր դատախազության ընդդեմ ՀՀ կառավարի կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության և Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերության միջև անշարժ գույքի օտարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և որպես հետևանք՝ իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:*

7. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ վարչական դատարանը, (...) հակակոռուպցիոն դատարանը»:*

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Հակակոռուպցիոն դատարանին են ենթակա (...) քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով (...)»:*

Նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Վարչական դատարան կարող են դիմել նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ*

պաշտոնապար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *«Դատախազի կողմից պետական շահերի, այդ թվում՝ պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետության կողմից համայնքին ուղղված ֆինանսական միջոցների պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է վարչական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը»*:

8. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին մանրամասն անդրադարձ է կատարել Վճռաբեկ դատարանը՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության* վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. *«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե սուբյեկտային կազմով, թե բովանդակությամբ և թե օբյեկտով: Այդ տարբերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»*[3]:

9. Սույն որոշման 7-8-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ հակակոռուպցիոն դատարանին ենթակա քաղաքացիական գործերն են՝ քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն ուղղված հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի

---

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության* վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործերը: Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է վարչական դատարանին ենթակա գործերի շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը, ներառյալ՝ վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադասության կարգով: Այսինքն՝ որևէ դատական գործի՝ վարչական կամ հակակոռուպցիոն դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

9.1. Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ վարչական դատարանին ենթակա գործերի շրջանակը ներառում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսդրությամբ ՀՀ դատախազությանը վերապահված՝ մեկ այլ վարչական մարմնի դեմ հայց ներկայացնելու հնարավորությունն այն դեպքում, երբ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է ՀՀ դատախազության վրա, և այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով:

10. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- ՀՀ գլխավոր դատախազությունը 2022 թվականի նոյեմբերի 21-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության և Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերության միջև անշարժ գույքի օտարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և որպես հետևանք՝ ՀՀ կադաստրի կոմիտեում կատարված իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին[4], որը ՀՀ վարչական դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ վերահասցեագրվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին[5],

- հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, 69-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին,

[4] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-335-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասին, ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-331-Ն ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 19-րդ, 22-րդ մասերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԱՔԴ/1369/02/09 գործով 2010 թվականի դեկտեմբերի 3-ին և թիվ ՎԴ/12145/05/13 գործով 2015 թվականի նոյեմբերի 27-ին արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2022 թվականի նոյեմբերի 30-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է հակակոռուպցիոն դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ սեփականության, գույքի օտարման շուրջ ստեղծված հարաբերությունները մասնավոր հարաբերություններ են, դրանցում Հայաստանի Հանրապետությունը (պետությունը) հանդես է գալիս որպես մասնավոր իրավունքի սուբյեկտ, և նշված հարաբերություններում առկա չէ հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացում, ուստի դատախազության պահանջը չի բխում հանրային իրավահարաբերություններից, այն պետության գույքային շահերի պաշտպանության հայց է և ենթակա է քննության քաղաքացիական դատավարության կարգով[6],

- հղում կատարելով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ 2-2040 գործով 2022 թվականի ապրիլի 13-ին և թիվ ՎԴ/7612/05/11 գործով 2022 թվականի մայիսի 19-ին, թիվ ՎԴ/0823/05/14, թիվ ՎԴ/0830/05/14 և թիվ ՎԴ/1621/05/14 գործերով 2016 թվականի ապրիլի 22-ին արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ հակակոռուպցիոն դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 7-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ ՀՀ գլխավոր դատախազությունը ոչ թե գույքի օտարման գործարքի շուրջ ստեղծված մասնավոր հարաբերությունների բացակայությունը ճանաչելու պահանջով է հանդես եկել, այլ՝ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի մինիստրների սովետի 1955 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 699 կարգադրության հիմքով ծագած իրավահարաբերությունների, իսկ կարգադրությունը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ մինսիտրենրի

[6] Տե՛ս սույն որոշման 4-րդ կետը:

սովետի հանրային իշխանական լիազորությունների իրականացումն է, որը դրսևորվել է պետական սեփականություն հանդիսացող որոշ անշարժ ու շարժական գույքերի մեկ պետական գերատեսչության հաշվեկշռից մյուսին փոխանցելու միջոցով: Հետևաբար, ըստ դատարանի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, սույն գործով հայցադիմումն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին[7]:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 7-9.1-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ սույն գործով ՀՀ վարչական դատարան հայցադիմում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազության կողմից, ընդ որում՝ այն ներկայացվել է ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության և Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերության միջև անշարժ գույքի օտարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և որպես հետևանք՝ ՀՀ կադաստրի կոմիտեում կատարված իրավունքի պետական գրանցումները անվավեր ճանաչելու պահանջների մասին: Այսինքն՝ հայցադիմումի առարկան կազմող հիմնական պահանջը Հայաստանի Հանրապետության և մասնավոր կազմակերպության միջև անշարժ գույքի օտարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելն է, որպիսի իրավահարաբերություններում պետությունը՝ ի դեմս իրավասու վարչական մարմնի, հանդես է գալիս որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմին, այլ ոչ որպես քաղաքացիաիրավական մասնավոր հարաբերությունների սուբյեկտ: Հետևաբար, հաշվի առնելով, որ հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը ենթակա են ՀՀ վարչական դատարանի իրավասությանը, ՀՀ դատախազությունը սույն գործով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի ուժով պետության գույքային շահերի պաշտպանության հայց է ներկայացրել ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ ՀՀ կադաստրի կոմիտեի, քանի որ այդպիսի վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով: Այսինքն՝ ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ կադաստրի կոմիտեի միջև առաջացել են վարչաիրավական հարաբերություններ, որտեղ մի կողմում վարչական մարմինն է՝ ՀՀ կադաստրի կոմիտեն, իսկ մյուս կողմում՝ ՀՀ գլխավոր դատախազությունը:

---

[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

12. Հետևաբար, ՀՀ հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՀԿԴ/0063/02/22 (ՎԴ/7252/05/22) գործը՝ ըստ հայցի՝ ՀՀ գլխավոր դատախազության ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության և Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերության միջև անշարժ գույքի օտարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և որպես հետևանք՝ ՀՀ կադաստրի կոմիտեում կատարված իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին, հիմնավոր է:

13. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ ՀՀ գլխավոր դատախազության հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՀԿԴ/0063/02/22 (ՎԴ/7252/05/22) գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՀԿԴ/0063/02/22 (ՎԴ/7252/05/22) գործն ըստ հայցի՝ ՀՀ գլխավոր դատախազության ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության և Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերության միջև անշարժ գույքի օտարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և որպես հետևանք՝ ՀՀ կադաստրի կոմիտեում կատարված իրավունքի պետական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ